ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՔՐՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ CBA-2026-079 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ

ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ № 1

ՀՀ կենտրոնական բանկի կարիքների ապահովման համար՝ մաքրող նյութերի և պարագաների մատակարարման CBA-2026-079 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ՀՀ Կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է 29.10.2026թ. դրությամբ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը՝

1. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հնարավո՞ր է արդյոք Հավելված 1-ի 1.2 ենթակետով նախատեսված հատակի հեղուկն առաջարկել 950 մլ, 1.3 ենթակետով նախատեսված ախտահանիչ հեղուկը՝ 750 մլ, 1.4 և 1.5 ենթակետերով նախատեսված լաքահանիչ հեղուկները՝ 2 լիտր, 1.7 ենթակետով նախատեսված մաքրող կրեմը՝ 500 մլ, 1.9 ենթակետով նախատեսված լվացքի փափկեցուցիչը՝ 1 լիտր, 1.12 ենթակետով նախատեսված հատակի մաքրող հեղուկը՝ 500 մլ տարողություններով՝ պահանջվող քանակները համապատասխանեցնելով առաջարկվող տարողություններին:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Հրավերի Հավելված 1-ի 1.2, 1.3, 1.4, 1.5, 1.7, 1.9 և 1.12 ենթակետերով նախատեսված ապրանքները պետք է համապատասխանեն նույն հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրերին, այդ թվում՝ տարողություններին և պահանջվող քանակներին: Այլ տարողություններով ապրանքներ առաջարկելը, նույնիսկ ընդհանուր քանակի համապատասխանեցման դեպքում, չի համապատասխանում հրավերի պահանջներին:

2. ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Հնարավո՞ր է տրամադրել հավելված 1-ի 1.22 և 1.23 ենթակետերով նախատեսված աղբի պարկերի պահանջվող քանակի և տարողության վերաբերյալ տեղեկատվություն՝ համապատասխանաբար հատով և լիտրով:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Հրավերի Հավելված 1-ի 1.22 և 1.23 ենթակետերով նախատեսված աղբի պարկերի պահանջվող քանակը յուրաքանչյուրի համար սահմանված է 140 կգ, իսկ չափսերը՝ համապատասխանաբար 35–45 սմ × 25–35 սմ և 110–120 սմ × 80–90 սմ: Աղբի պարկերի քանակը հատերով և տարողությունը լիտրերով հրավերով սահմանված չեն: Առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հրավերի Հավելված 1-ով սահմանված պահանջներին:

ՀՀ կենտրոնական բանկի Մրցութային հանձնաժողովի քարտուղար՝
Սիրան Եգանյան
Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ